Ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

EU4GREENRECOVERYEAST

Կանաչ, դիմակայուն և մրցունակ աճի մոդել Արևելյան գործընկերության երկրների համար

«ԵՄ-ն՝ հանուն կանաչ վերականգնման» ծրագիրը տարածաշրջանային նախաձեռնություն է Արևելյան գործընկերության երկրների համար՝ աջակցելու նրանց ուղին դեպի ավելի կանաչ, ավելի դիմակայուն և մրցունակ տնտեսություններ:

ԵՄ կողմից **21.3 միլիոն եվրո** ֆինանսավորմամբ ծրագիրը **(2025-2028 թթ.)** համահունչ է «ԵՄ կանաչ գործարք» և «ԵՄ գլոբալ դարպասներ»նախաձեռնություններին՝ խթանելով շրջակա միջավայրի քաղաքականության նորարարությունները, որոնք ստեղծում են աշխատատեղեր, բարելավում առողջությունը և ապահովում կենսական ռեսուրսների կայունությունը:

«ԵՄ-ն՝ հանուն կանաչ վերականգնման» ծրագիրը հիմնվում է ջրերի կառավարման բարելավման և կանաչ տնտեսության խթանման ուղղություններով ԵՄ-ի կողմից՝ ավելի քան մեկ տասնամյակ ցուցաբերված աջակցության արդյունքների վրա: 2021-2024 թթ. ժամանակահատվածում ԵՄ-ն աջակցել **է 21 գետավազանային կառավարման պլանների ընդունմանը, բացահայտել 7.7 մլն եվրո ներդրումային** կարիքներ և խթանել բնահեն լուծումների կիրառումը:

Բարելավվել է ջրի որակի մոնիթորինգը, հզորացվել է անդրսահմանային համագործակցությունը և շրջակա միջավայի տվյալների փոխանակումը: ԵՄ աջակցությունը նաև օժանդակել է **400 ՓՄՁ-ների՝** օպտիմալացնելու ռեսուրսների օգտագործումը, ներդնելու էկո-արդյունաբերական պարկեր՝ կայուն արտադրության նպատակով, ինչպես նաև խթանելու էկոլոգիապես մաքուր արտադրանքի սերտիֆիկացմանը:

Implementing partners:

ENVIRONMENT AGENCY AUSTRIA · EXPERTISE FRANCE GROUPE AFD · OiEau International Office for Water · OECD BETTER POLICIES FOR BETTER LIVES · UNECE · UNIDO UNITED NATIONS INDUSTRIAL DEVELOPMENT ORGANIZATION Progress by innovation

«ԵՄ-ն՝ հանուն կանաչ վերականգնման» ծրագրի նպատակը

*Ծրագիրը համահունչ է Արևելյան գործընկերության երկրներում մարդկանց **կայուն և մրցունակ ապագայի** ընդհանուր հանձնառությանը՝ ապահովելով հետևյալը.*

Առողջություն և բարեկեցություն. Ջրի աղտոտման կրճատում և դեգրադացված շրջակա միջավայրի վերականգնում՝ հանուն ավելի առողջ բնակչության և դիմակայուն էկոհամակարգերի:

Տնտեսական աճ և աշխատատեղեր. Աջակցություն բիզնեսներին, մասնավորապես՝ փոքր և միջին ձեռնարկություններին՝ ընդունելու կայուն գործելակերպեր, որոնք կբարձրացնեն նրանց արդյունավետությունը և կխթանեն տեղական աշխատատեղերի ստեղծմանը: Շրջակա միջավայրի քաղաքականությունների ներդաշնակեցման միջոցով դեպի ԵՄ շուկաներ մուտքի հեշտացում:

Անվտանգություն և կայունություն. Շրջանաձև տնտեսության զարգացման միջոցով արտաքին ռեսուրսներից կախվածության կրճատում: Ռեսուրսների սակավության և շրջակա միջավայրի դեգրադացիայի նվազեցում՝ բնական ռեսուրսների ավելի լավ կառավարման միջոցով: Երկրների միջև երկխոսության խրախուսում՝ շրջակա միջավայրի հիմնախնդիրների լուծումներ գտնելու նպատակով:

Հանրային նախաձեռնություններ

Այս նոր ծրագիրը հանդիսանում է նախկին՝ «ԵՄ-ն՝ շրջակա միջավայրի համար» տարածաշրջանային ծրագրի «կանաչ տնտեսություն», «ջուր» և «շրջակա միջավայրի տվյալներ» բաղադրիչների տրամաբանական շարունակությունը: Ինչ վերաբերում է «ԵՄ-ն՝ շրջակա միջավայրի համար» ծրագրի «պահպանվող տարածքներ» և «անտառներ» բաղադրիչներին, ապա դրանց իրականացվումը երկարաձգվել է մինչև 2026 թ. դեկտեմբեր:

Տարածաշրջանում ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող համանման թեմաներով ծրագրերից է «ԵՄ-ն՝ հանուն կլիմայի դիմակայության» ծրագիրը, որն աջակցում է Արևելյան գործընկերության երկրներում կանաչ փոխակերպմանը, ածխածնազերծմանը, էներգետիկ անվտանգությանը և կլիմայի դիմակայությանը:

Ծրագրի հինգ բաղադրիչները՝ հանուն ավելի կանաչ ապագայի

1 **Խթանել շրջանաձև տնտեսությունը և ռեսուրսների արդյունավետությունը.** Աջակցություն ձեռնարկություններին՝ ընդունել շրջանաձև մոդելներ՝ նոր աշխատատեղեր ստեղծելու և ծախսերն ու արտաքին ներդրումներից կախվածությունը նվազեցնելու նպատակով:

2 **Պահպանել ջրային ռեսուրսները և կրճատել աղտոտումը.** Ջրի որակի բարելավում ավելի լավ կառավարման և մոնիթորինգի միջոցով՝ ապահովելու հանրային և էկոհամարկարգերի առողջությունը:

3 **Ներդաշնակեցնել շրջակա միջավայրի՝ ԵՄ ստանդարտների հետ.** Աջակցություն կառավարություններին՝ ԵՄ շրջակա միջավայրի քաղաքականություններին ներդաշնակեցնելու հարցում (ԵՄ օրենսդրության 27-րդ գլուխ):

4 **Հզորացնել շրջակա միջավայրի տվյալները և թվայնացումը.** Շրջակա միջավայրի տվյալների ինտեգրման և փոխանակման բարելավում ազգային և ԵՄ մակարդակներով՝ ավելի լավ քաղաքականություն մշակելու նպատակով:

5 **Շրջակա միջավայրի հիմնախնդիրների վերաբերյալ անդրսահմանային համագործակցության բարելավում.** Բնական պաշարների վերաբերյալ տարածաշրջանային համագործակցության խրախուսում՝ խթանելու անդրսահմանային աղտոտմանն անդրադարձող բնապահպանական կայուն քաղաքականությունները և գործելակերպերը:

Ծրագրի նշանակությունը ոչ պետական կառույցների համար

Մասնակցություն որոշումների կայացմանը և բնապահպանական միջոցառումներին. Շրջակա միջավայրի տվյալներին հասանելիություն և մասնակցություն ջրերի կառավարման որոշումների կայացման գործընթացին:

Նոր բիզնես մոդելներ. Աջակցություն շրջանաձև տնտեսության սկզբունքների և գործելակերպի ընդունմանը՝ կրճատելու ծախսերը և բարձրացնելու մրցունակությունը:

Հասանելիություն ֆինանսավորմանը. Կանաչ ներդրումների ֆինանսավորման հնարավորությունների հասանելիության վերաբերյալ տեղեկատվություն և ուղեցույց:

Կապերի ստեղծում. Այլ բիզնեսների և փորձագետների հետ կապերի ստեղծում շրջանաձև տնտեսության կենտրոնների և ակումբների միջոցով:

Վերապատրաստում և ռեսուրսներ. Հասանելիություն առցանց դասընթացներին և լավագույն փորձի շտեմարանին:

Դեպի ԵՄ շուկաներ մուտքի հեշտացում՝ շրջակա միջավայրի ԵՄ քաղաքականությունների հետ ներդաշնակեցման միջոցով:

Ավելին eu4greenrecoveryeast.eu

Ծրագրի նշանակությունը պետական ոլորտի կառույցների համար

Աջակցություն քաղաքականությանը. Աջակցություն շրջակա միջավայրի արդյունավետ քաղաքականությունների և կանոնակարգերի մշակմանը և իրականացմանը:

Կարողությունների զարգացում. Շրջանաձև տնտեսության, ջրային ռեսուրսների և շրջակա միջավայրի կառավարման, ինչպես նաև միջոցառումների ֆինանսավորման վերաբերյալ թիրախային ուղեցույցեր, վերապատրաստում և գիտելիքների փոխանակում:

Հասանելիություն ԵՄ ցանցերին. Հնարավորություն՝ մասնակցելու շրջակա միջավայրի ոլորտում համագործակցության եվրոպական նախաձեռնություններում:

Տվյալներ և տեղեկատվություն. Շրջակա միջավայրի տվյալների կառավարման և հաշվետվողականության բարելավված համակարգեր՝ քաղաքականության փաստահեն որոշումներ կայացնելու նպատակով:

Մի նետեք հանրային ծառայողներին.

2025 թ. մարտ

Սույն հրապարակումը ֆինանսավորվել է Եվրոպական միության կողմից: Դրա բովանդակության պատասխանատուն բացառապես «ԵՄ-ն՝ հանուն կանաչ վերականգնման» ծրագրի հաղորդակցության բաղադրիչի կառավարիչ հանդիսացող Ֆրանսիայի ջրերի միջազգային գրասենյակն է, եւ արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության տեսակետները: © – 2025 – Ֆրի միջազգային գրասենյակ (OiEau): Բոլոր իրավունքները պաշտպանված են: Լիցենզավորված է Եվրոպական միությունը համաձայն պայմանների: